ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ Վ.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.173 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևանի Լ. Միրիանյանի անվան հ. 155 հիմնական դպրոցի կենսաբանության ուսուցիչ՝

Էլիզա Բախշիկի Ղազարյան

«Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում»

հետազոտական աշխատանք

Երևան 2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն----------2

2. Ի՞նչ է նշանակում համագործակցություն սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝----------7

3.Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների ներգրավվածության նշանակությունը----------8

- Օգուտ աշակերտին
- Օգուտ ծնողին
- Օգուտ ուսուցչին
- Օգուտ դպրոցին

4.Ծնողների ներգրավվածություն----------9

5. Ծնողների ներգրավածության վիճակագրությունը ՀՀ մարզային և քաղաքային բնակավայրերում----------11

- Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավածությունը:
- Ի՞նչ է ծնողների ներգրավածության արգելքը:

6.Եզրակացություն----------14

7.Օգտագործած գրականության ցանկ----------15

Ներածություն

Ազգը պահող ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ փոխանցողը ընտանիքն է: Վայր, ուր թրծվում է անհատի նկարագիրը: Ընտանիքում է մարդն ստանում նախնական հոգևոր և բարոյական դաստիարակությունը: Հետևաբար կարևոր է հոգևոր – բարոյական այն մթնոլորտը, որի մեջ մեծանում է անհատը:

Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը մարդ կերտելու գործընթացն է, ոչ իբրև ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների խտացում: Եթե անհատը մեծանում է բարոյական բարձր հիմքերի վրա գտնվող փոխհամաձայնության և հարգանքի մթնոլորտ ունեցող ընտանիքում, բնական է , որ այն իր կնիքը կդնի նրա հոգու ու սրտի վրա նրա մեջ իսկական Մարդ կերտելով:

Որոշակի տարիքից հետո արդեն ընտանիքից դուրս անհատը մտնում է արդեն այլ միջավայր (բակ, դպրոց և այլն): Միջավայրը ինչ-որ չափով իր ազդեցությունն է ունենում նրա հետագա զարգացման և որպես մարդ կայացման գործում, սակայն այն, ինչ նա ստացել է ընտանիքում և գեներով ժառանգել ծնողներից, երբեք չի կարող փոխվել խաթարվել, որովհետև ինչպես ժողովուրդն է ասում «Արյան մեջ է»:

Անհատի նկարագիրն աղճատող և էությունն խեղող առաջին պատճառը ընտանեկան ոչ առողջ միջավայրն է, որն իր բոլոր բացասական հետևանքով կործանում է այնտեղ հասակ առնող երեխաների ողջ կյանքը, սկսած մանկության քաղցր ու անհոգ տարիներից: Մանկական տարիքը նման է սպիտակ թղթի, որի վրա մի անգամ դրոշմվածն անջնջելի է մնում:

Կրթված ու գիտելիքներով զինված սերունդ դաստիարակելիս ծնող- ուսուցիչ, ուսուցիչ-ծնող, փոխհամագործակցության համատեղ աշխատանքի գլխավոր նպատակը նախ և առաջ աշակերտի ուսումնական առաջադիմությունն է:

Ցանկացած ուսուցիչ բախվել է ու բախվելու է այն հարցին՝ ծնողական եսասիրություն՝ իր երեխան լավագույնն է , նա արժանի է առավելագույն գնահատականի, իսկ ուսուցիչը կողմնակալ վերաբերմունք է ցուցաբերում:

Դպրոցական գույքի, դասարանի, շրջապատի նկատմամբ հոգածություն ը պիտի դրսևորի յուրաքնչյուր աշակերտ, և սանի մեջ դրա սերմանումը պետք է սկսել տանից:

Վերադառնալով ուսուցչի և ծնողի համագործակցությանը՝ հավելենք, որ ուսուցիչ- ծնող կապն աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպման կարևորագույն բաղադրիչ օղակներից է: Մենք ունենք մեկ ընդհանուր նպատակ, կրթել, դաստիարակել, զարգացնել, երեխային ուստի մեր փոխհամագործակցությունը և միմյանց հետ մշտական կապ պահպանելը բխում է հենց այդ նպատակի իրագործումից, երկու կողմերի շահերից: Չմոռանանք աշակերտին, որն այս ողջ գործընթացի կենտրոնն է, այն կենտրոնը, որի շուջը պտտվում է մնացյալ ամեն բան:

Այս ամենին կա մեկ լուծում՝ աշխատե՛նք միասին...

«Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում»

Այս վերապատրաստման շրջանակներում մեզ առաջարկված թեմաներից իմ հետազոտական աշխատանքի համար նախընտրեցի այս թեման , քանի որ դասավանդում եմ դեռահասների հիմնական դպրոցի 6-9-րդ դասաանների աշակերտների, որոնց մոտ դիտվում է ֆիզիոլոգիան և սոցիալական հասունացման բուռն ընթացք, որն ուղեկցվում է հոգե բանական անցումային ճգնաժամերով: Կարևորում եմ հասարակության լիարժեք անդամի և սոցումի մաս կազմող անհատների ձևավոևման գործում այս երկու կարևորագույն օղակների լիարժեք, փոխլրացնող, փոխօգնող համագործակցությունը:

Սույն աշխատանքը կատարելիս իմ նպատակն է եղել հնարաորինս ՀՀ մեծաթիվ բնակավյրերում ուսումնասիրել թե ինչպես է իրականանում այդ համագործակցություն և ինչ քայլեր են ձեռնարկվում համագործակցությանը սահուն ընթացքով տանելու համար:

Ով է հանդիսանում շահագրգիռ կողմ

Ով է իր ուսերին կրում և կազմակերպում այս բարդ աշխատանքը

Ով կամ ովքեր են լինում աշխատանքի լավ արդյունքից շահողները:

Սույն աշխատանքը կատարելիս հաշվի ենք առել արդի ժամանակներում ուսումնական գործընթացին վերաբերող մի քանի հրատապ լուծում պահանջող խնդիրներ՝ ուսումնական որակի անընդհատ ցածրացումը, որը ակնհայտորեն երևում է

միասնական քննությունների արդյունքներից, բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության նվազումը, կոնֆլիկտային իրավիճակների հաճախակի դառնալը ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, երեխա –ծնող փոխհարաբերություններում: Փորձել գտնել այս փոխհարաբերության օղակում այն բացը, որը ի նպաստ կծառայեցնենք ապագա սերնդի լիարժեք կրթության ու դաստիարակության գործում:

1. **Թեմայի արդիականությունը**

Մեր առջև դրված է կազմակերպել և իրականացնել ,ընտրել և կիրառել համագործակցել աշակերտների ուսումնական գործընընթացի համար շահագրգիռ, ինչու չէ նաև պատասխանատու բոլոր կողմերի հետ: Համագործակցությունը ճիշտ կազմակերպելու համար ուսումնասիրություններ կատարել ՀՀ մի շարք գյուղական և քաղակային բնակավայրերում: Հետազոտության արդյունքում ստացված տվյալները համեմատել միմյանց հետ: Համեմատելով , թե ինչպես է իրականացվում համագործակցությունը կրտսեր դպրոցում, միջին ու ավագ դպրոցի ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար: Հասանելի դարձնել համագործակցության ճիշտ օրինակները, զուգահեռներ տանելով իրականացման ուղղիների միջև կրտսեր, միջին, ավագ դասարաններում:

Վեր ենք հանել «**Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում**» թեման որպես հետազոտական աշխատանք, քանի որ անհրաժեշտություն կար պարզելու , թե ինչպիսի մակարդակի վրա է գտնվում այսօրվա դպրոցում ուսուցչի համագործակցությունը սովորողների օրինական ներկայացուցիչների հետ :

Ինչու՞ այս թեման ընտրվեց և ինչու՞ համագործակցությունը սովորողների օրինական ներկայացուցիչների հետ , որովհետև այսօրվա դպրոցում ծառացաց մի շարք խնդիրներ կարող են իրենց լուծումը ստանալ միմիյան ճիշտ և գրագետ մոտեցման արդյունքում: Այլապես ոչ ճիշտ մոտեցման արդյունքում, համագործակցությունը չապահովելու հետևանքով , երբենք մենք չենք կարող կազմակերպել որակյալ ուսումնական գործընթաց:

2. **Ուսումնասիրման օբյեկտը**

Սույն աշխատանքի ուսումնասիրման օբյեկտ են հանդիսացել ՀՀ մի շարք բնակավայրերի կրտսեր, միջին, ավագ դասարանները:

3. **Ուսումնասիրման առարկան**

Ուսումնասիրման առարկա է ընտրվել սովորողների օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության իրականացումը :

Սովորողների օրինական ներկայացուցիչների հետ համագործակղցության ճիշտ և գրագետ կազմակերպումը, ինչպիսի դրական արդյունքներ է տվել ուսումնական գործընթացին

ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերից ֆիտոհորմոն հանդիսացող հետերոաուքսինը և նրա ունեցած ազդեցությունը հացահատիկային կուլտուրաների վրա:

4. **Հետազոտության նպատակը**

Հանրակրթական դպրոցներում կատարված դիտարկումների արդյունքում ցույց տալ և հիմնաորել ճիշտ և տեղին համագործակցության կարևոր դերը, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման մեջ, ինչպես նաև անհատի, կայացման և ձևավորման գործում:

5. **Հետազոտության խնդիրը**

Սույն աշխատանքում մեր նպատակին հասնելու համար հարկավոր է լուծել հետևյալ խնդիրները.

ա/Երկշաբաթյա ժամկետում կապ ստեղծել հանրակրթական տարբեր դպրոցների հետ, տեղում ծանոթանալ դպրոցում կատարվող համագործակցության օրինակների, գրանցել իրավիճակը տվյալ հանրակրթական հաստատության, կատարել համեմատություններ համագործակցության, կրտսեր, միջին, ավագ դասարաններում գալ եզրահանգման, ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից

բ/Ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա կարողանալ համեմատական վերլուծություններ կատարել

դ/Վերլուծության արդյունքում պարզաբանել համագործակցության մակարդակը տարբեր տարիքային խմբերի աշակերտների , կարողանալ կատարել եզրահանգումներ

6. **Վարկածը**

Մեր հետազոտական աշխատանքում առաջ քաշած վարկածները հետևյալներն են. արդյոք բոլոր տարիքային խբերում պետք է մշտապես պահպանել համագործակցությունը սովորողների օրինական ներկայացուցիչների հետ, արդյոք այդ համագործակցության արդյունքում նկատվում է դրական դինամիկա : Որոշակի հանգամանքների բերումով եթե համագործակցությունը լիարժեք չի լինում, կամ էլ իսպառ ընդհատվում է արդյոք իրենց անդառնալի հետևանքները չեն թողնում ուսունական գործընթացի, անհատի, հասարակությյալ լիիրավ անդամի ձևավորման վրա:

Վարկածներից մյուսն էլ հիմնված էր այն փաստի վրա, որ գյուղական բնակավայրերում ծնողների ներգրավվածությունը ավելի ակտիվ կլինի համեմատած քաղաքային բնակավայրերի հետ, ելնելով մարդկանց զբզղվածության մակարդակից:

Ինչ է նշանակում ծնողների ներգրավածություն

Ընդունակություններ ունենալն անհրաժեշտ է, սակայն ոչ բավարար: Դասարաններում քիչ չեն իրենց ընդունակություններով ու կարողություններով աչքի ընկնող աշակերտները,որոնք ունեն նաև անհանգիստ բնավորություն ու անզուսպ էներգիա: նման աշակերտներից ոմանք հաճախ են անպատրաստ կամ թերի կատարած տնային աշխատանքներով ներկայանում դասին: Նմանատիպ խնդիրներից խուսափելու, կամ հարցին լուծում տալու համար տվյալ իրավիճակներում, ուսուցիչ աշակերտ անընդհատ կապից բացի, պահանջում է , նաև ուսուցիչ- ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցություն և փոխվստահություն:

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գորխընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, աշակերտների մոտ զարգանում են սոցիալական հմտություններ և նրանց վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն կարևոր գործոններն են , որոնք ազդում են աշաերտի վրա, ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն ինչպես կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավածությանը:

Ինչպիսի կարևորություն ունի ծնողների ներգրավվածությունը:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտների հաջողությունների և ուսման բարելավմանը՝ ինչպես տանը , այնպես էլ դպրոցում: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է

ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

1. Դպրոցական միջոցառոմներին հնարաորինս շատ մասնակցություն

2. Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գնահատում ծնողի կողմից

3.Ուսուցչի հետ կանոնաոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում

4. Տնային առաջադրանքների կատարման ժամանակ երեխաների առաջընթացի քննքրկում

5. Տնային առաջադրանքների կատարման ընթացքում օգնության ցուցաբերում

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է

Ծնողների իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվության ապահովում:

Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին:

Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով:

«Ծնող » ասելով չպետք է հասկանալ միյն հայր կամ մայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց , ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Այս փաստաթղթում «ծնող » տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց , որոնք պատասանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտի հաջողության համար: Ինչպիսին էլ լինի ընտանիքի սոցիալ տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին , աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Տարբեր հետազոտությունների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում ենկրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում: Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն բարձր ակադեմիական ձեռքբերում, որակով կատարած տնային առաջադրանքներ, աչքի են ընկնում դրական վարքով:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրն և նպաստում նրա զարգացմանը:

Լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցությամբ:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա:

Ստորև ներկայացնենք և քննարկենք այն խմբերի ցանկը, որոնք օգուտ են ստանում:

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին թե ինչպիսին է ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը;

Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ, կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների ակադեմյական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է : Երբ ծնողները ներգրաված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:: Երբ ծնողները ներգրաված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի լավ վարք են դրսևորում: Դպրոցի կյանքում մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ են ունենում, ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ:

Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն- հմտությունների զարգացման համար: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը

Ա. ավելի լավ է հասկանում սեփական երեխային

Բ . ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին

Գ. ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն, հմտությունների բարձրացմանը

Դ. երեխային տալիս է հնարավորություններ , ավելի վստահորեն արտահայտել սեփական տեսակետները, հիմնախնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ծնողների հետ

Ե. լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնախնդիրները լուծելու համար:

Օգուտ ուսուցչին

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնքվստահ դառնալուն:

Ա.ուսուցչի մոտ հաղես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ

Բ. ուսուցիչը ավելի է բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից

Ծնողների ներգրավածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտների անհատական կարիքների կարգավորումըուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունքներ կտա:

Օգուտ դպրոցին

Ծնողների ներգրավածությունը դրականորեն է ազդում դպրոցի վրա ևս

Ա.դպրոցը ծնողներիկողմից ավելի աջակցում ունի

Բ. աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ

Գ.դպրոցական ծրագրերը , որոնցում մասնակցում են ծնողները ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել

Դ. այն դպրոցները որտեղ աշակերտների հաճախումը ցածր է , ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Ծնողների ներգրավվա ծության վիճակը ՀՀ-հանրակրթական դպրոցներում

Այս ընթացքում կատարված հետազոտության ժամանակ տարրական կրթության որակի բարելավմանը ուղղված աշխատանքները: Ուսումնասիրությունը հաստատեց դպրոցների աջակցման անհրաժեշտությունը ծնողների ներգրավվածության հարցում դպրոցների գտնվելու վայրի համաձայն տարբեր դժվարություններ առաջ եկան:Ա

Հայաստանի դպրոցների հարցման արդյունքները ծնողների ներգրավածության տեսանկյունից **(**Արագածոտն մարզ՝ Լեռնապար,Ծիլքար, Ծաղկահովիտ, Լոռու մարզ՝ Ջրաշեն, Լեռնավան, Նալբանդ, Սանահին, Սյունիքի մարզ՝ Կապան, Կոտայքի մարզ՝ Եղվարդ, Երևան Աջափնյակ համայնք՝ 155հիմնական դպրոց, 156 հիմնական դպրոց, 195ավագ դպրոց, 118 ավագ դպրոց, 94 ավագ դպդպրոց)

Ի՞նչ դժվարությունների են հանդիպում տնօրենները,ուսուցիչները և ծնողները ՀՀ քաղաքներում և տարածաշրջաններում

ՈԻսումնասիրության արդյունքների ամփոփում

N	Տնօրեն	Ուսուցիչ	Ծնողներ
1	Ծնողների բացասական	Ծնողների կողմից	Դպրոցի կողմից ոչ լրիվ

	վերաբերմունքը ուսուցման նոր մեթոդների նկատմամբ	դաստիարակության ոչ ճիշտմեթոդների կիրառումը	տեղեկատվության հաղորդում
2	Ծնողների ժամաննակի ծանրաբեռնվածության գրաֆիկը	Երեխաներին պակաս ժամանակի տրամադրում	Ծնողներին անհասկանալի դասագրքերը
3	Աշակերտի ընտանիքի ծանր սոցիալական-տնտեսական պայմանները	Ծնողների պակաս հետաքրքրություն երեխայի դպրոցական կյանքի հանդեպ	
4	Ծնողները բնավում են արտասահմանում	Ծնողների անվստահությունը ուսուղիչների նկատմամբ	

Երևան (Երևան Աջափնյակ համայնք՝ 155հիմնական դպրոց, 156 հիմնական դպրոց, 195ավագ դպրոց, 118 ավագ դպրոց, 94 ավագ դպրոց)

N	Տնօրեն	Ուսուցիչ	Ծնողներ
1	Ծնողների բացասական վերաբերմունքը ուսուցման նոր մեթոդների նկատմամբ	Ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտմեթոդների կիրառումը	Դպրոցի կողմից ոչ լրիվ տեղեկատվության հաղորդում
2	Ծնողների ժամաննակի ծանրաբեռնվածության գրաֆիկը	Երեխաներին պակաս ժամանակի տրամադրում	Ծնողներին անհասկանալի դասագրքերը
3	Աշակերտի ընտանիքի ծանր սոցիալական խնդիրները		

Բարձր լեռնային շրջաններ (Արագածոտն մարզ՝ Լեռնապար,Ծիլքար, Ծաղկահովիտ)

1	Ծնողների ծանր սոցիալ-տնտեսական պայմանները	Ծնողների պակաս հետաքրքրությունը երեխայի դպրոցական կյանքի հանդեպ	Ընտրած դասագրքերը ծնողները բացասական են գնահատում
2	Ծնողների ժամաննակի ծանրաբեռնվածության գրաֆիկը	Ծնողների և աշակերտների կողմից իրավունք-պարտականությունների մասին անտեղյակություն	Երեխաների այլևայլ նախաձեռնությունների արհամաում

Ծնողների ներգրավվածություն

Ծնողների ներգրավվա ծությանից ստացված օգուտը պարզ է: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ծնողների ներգրավածությունը ոչ միայն բարելավում է աշակերների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռքբերումներին:

Ամերիկյան ուսուցիչների վերջին ժամանակներում անցկացրաց հարցումների արդյունքում բացահայտվեց, որ նոր մանկավարժների 20% և տնօրենների համարյա ¼ ծատայողական սթրեսի կարևոր պատճառը համարում են իրենց՝ ծնողների հետ հարաբերությունները:

Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավածությունը

Ծնողի հաջողված ներգրավածություն կարելի է հասկանալ , որպես ծնողի ակտիվ , կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածությունը կարող է տանը լինել, երբ ծնողը երեխայի հետ միասին կարդում է , օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեմեջ:

Ինչ է ծնողների ներգրավվածության արգելքը

Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործնեության մեջ, մտածելով ,որ նրանք գլուխ չեն հանի դրանից: Սա արդեն նախնական սխալ կարծիք է:ՈՒսուցիչները

գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ , այնինչ ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել:

Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքի ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև մեծ հինախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են , որնրանց դպրոցում սիրով չեն սպասում: Սա մասնաորապես բացասական փորձի հետևանք է,որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս:

Եզրակացություն

Ծնողները պետք է ունենան մեծ ցանկություն ու կամք, իսկ դպրոցները պետք է համագործակցեն նրանց հետ, որպեսզի դպրոցն ու ընտանիքը ունենա միանման սպասումներ և օժանդակի ուսումնական գործընթացին:

Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցները որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծագրեր գոյություն ունեն , ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են

Հաճախելիության բարելավում

Բարձր առաջադիմություն

Աշակերտների լավ վարք

Ծնողների վստահության բարձրացում ուսումնական պրոցեսի նկատմամբ

Աշակերտին օգնում ու մոտիվացնում է սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին.

1. Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում

2. Համարվում են գործընկեր երեխաների ուսման ու զարգացման գործում

3. Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու դպրոցի գործունեությանը

4. Մշտական շփում ունեն դպրոցի անձնակազմի հետ

5. Դպրոցը տալիս է օգտակար տեղեկատվություն, ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը

Ծնողներ արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը, որն իրականացնում է դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը, պատրաստել ռեսուրսներ, որոնք յուրաքանչյուր դպրոց կկիրառի ծնողների ներգրավվածության ծրագրի ուժեղացման համար:

Յուրաքանչյուր ռեսուրս կարելի է օգտագործել՝ ելնելով դպրոցի պահանջներից:

Օգտագործված գրականության ցանկ

, 1. Հակոբյան Լ., Ընտանեկան իրավունք: -Եր., 2002: 2.
Նալչաջյան Կ.Ա., Ընտանեկան կյանքի փակ էջեր: -Եր., 2003:

15. Мудрик А.В.. Социальная педагогика. -М., 1999. 16. Наторп П., Социальная педагогика., -М., 1986. 17. Никитин В.А., Понятие и принципы социальной педагогики. –М., 1996.

23. Социальная педагогика. Под редакцией В.А.Никитина. –М., 2002. 24. Социальная педагогика: теория, методика и опыт исследования. Свердловск,

http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

https://travelerscoffee.ru/hy/eggplant/netradicionnye-formy-raboty-s-roditelyami-v-detskom-konsultaciya-

https://aspu.am/website/images/files/8352c820.pdf

/